

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՍՔ Երկուշաբթի, 18 Փետրուարի, 2008

Հայ Յեղածոխական Դաշնակցութեան հիմնադիրներից Քրիստափոր Միքայելեանի թոռնուհու՝ Ելենա Միքայելեան-Չելեապովայի յուղարկաւորութեան եւ թաղման արարողութիւնը տեղի ունեցաւ Երեքշաբթի, Փետրուարի 19-ին, Hollywood Hills Forest Lawn գերեզմանատանը: Արարողութեանը ներկայ էին հանգուցեալի ընտանեկան պարագաները, ազգականները, Յ.Յ.Դ. Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի անդամները, կուսակցական ընկերներ եւ համակիրներ: Հանգուցեալի մարմինը հողին յանձնուեց «Վերքերով լի»-ի երգեցողութեամբ: Յ.Յ.Դ.-ի կողմից դամբանական կարդաց Յակոբ Մանճիկեանը: 1917 թուականին, Կիւեւում ծնուած Ելենան իր մահկանացուն կնքեց Փետրուարի 8-ին, երկարատեւ հիւանդութիւնից յետոյ: Նա Ռուբէն եւ Վերա Միքայելեանների դուստրն էր:



Կիրակի, Յունուարի 27-ի երեկոյեան, Փասադէնայի Հայ կենտրոնի սրահում տեղի ունեցաւ «Համազգային» Հայ կրթական ու մշակութային ընկերակցութեան Փասադէնայի «Շահան Շահնուր» մասնաճիւղի կազմակերպած հայկական «Տոհմիկ օր» անուամբ միջոցառումը՝ նուիրուած Այնթապ, Քիլիս եւ Մարաշ քաղաքներին: Միջոցառմանը ելոյթ ունեցաւ մասնաճիւղի վարչութեան ատենապետ Ռաֆֆի Հարպոյեանը, որ շեշտելով, թէ «Համազգային»-ի համար հայկական աւանդոյթների պահպանումը եւ տարածումը եղել է մեկնակէտ, մասնաճիւղի անունից խոստացաւ այսուհետ շարունակել նման ձեռնարկների կազմակերպումը: «Ազգովին գտնուում ենք զանազան մարտահրաւերների առջեւ, որոնց վրայ աւելանում են նաեւ մեր մշակոյթի շուրջ համախմբուելու հրամայականը», ասաց նա: Խօսելով երիտասարդութեան մասին, Ռաֆֆի Հարպոյեանը շեշտեց, թէ մեր անմիջական շրջապատում անհրաժեշտութիւն է երիտասարդութեան ներկայութիւնը, որովհետեւ նրանք են ազգի ապագան: Միջոցառման ընթացքում գործադրուեց գեղարուեստական ծրագիր եւ ներկաներին հրամցուեց Այնթապի, Քիլիսի եւ Մարաշի աւանդական ճաշատեսակներ:



Յունուարի 25-26-ին Սան Ֆրանցիսկո է այցելել «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրէն Վահէ Աղաբէկեանցը եւ երկու հանրային ելոյթներով բացատրել է Սան Ֆրանցիսկոյի ու շրջակայքի հայութեան կողմից որդեգրուած Հայաստանի Տաւուշի շրջանի սահմանակից 5 գիւղերի կաթի հաւաքման կենտրոնի կառուցման ու կահաւորման ծրագրի մանրամասնութիւնները: Տեղական յանձնախմբի եւ մի շարք նուիրատուների հետ հանդիպումներ ու խորհրդակցութիւններ ունենալուց յետոյ, Վահէ Աղաբէկեանցը Ուրբաթ, Յունուարի 25-ին ծրագիրը ներկայացրել է Սանթա Քլարայի, իսկ Շաբաթ, Յունուարի 26-ին՝ Սան Ֆրանցիսկոյի գաղութներին: Նշենք, որ Սան Ֆրանցիսկոյի եւ Ծովածոցի հայութիւնը այս ծրագրի իրականացման համար 175 հազար դոլարի յանձնարարութիւն է ստանձնել, որի շուրջ 75 հազար դոլարը արդէն իսկ գոյացել է 2007-ի թելեթոնով, իսկ մնացեալը կը գոյանայ ընթացիկ տարուայ ընթացքում՝ ծրագիրը մինչեւ տարեվերջ ամբողջացնելու համար:



Մեծ ոգելորութեամբ շարունակուում են ՔԱ.Հ.Ա.Մ. կոչուող Կալիֆորնիայի հայ աշակերտական մարզախաղերը, որոնց մասնակցում են հայկական վարժարանների առաջինից մինչեւ ութերորդ դասարանների 147 երկսեռ խմբեր: «Հայ աշակերտութեան համար մարզական մաքրամաքուր մթնոլորտ են ստեղծում ՔԱ.Հ.Ա.Մ.-ի մրցումները: Այս մարզախաղերը մեկնակէտ են դարձել աշակերտութեան համար եւ անհամբերութեամբ սպասուում են թէ՛ աշակերտութեան եւ թէ՛ ծնողների կողմից», - ասել է մրցումների կազմակերպիչ Շրջանային մարզական խորհրդի ատենապետուհի Նայիրի Տէրտէրեանը: Այս տարուայ ՔԱ.Հ.Ա.Մ.-ի մրցումներին մասնակցում են «Ռոզ եւ Ալէք Փիլիպոս», «Արի Կիրակոս», Հայ Քոյրերի, «Արշակ Տիգրանեան», «Յովսէփեան», «Շամլեան», «Սահակ Մետրոպ», «Ֆերահեան», Հ.Բ.Ը.Մ.ի

«Մանուկեան-Տէմիրճեան», «Մերտինեան», «Մխիթարեան» եւ «Մեսրոպեան» վարժարանների երկսեռ աշակերտութիւնը:



Երկուշաբթի Փետրուարի 17-ին թուրքական դրօշի աստղ ու մահիկ է գծուել Գլենդէլի Աբ. Պետրոս Չայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ դրսի պատի վրայ: Այդ մասին ոստիկանութեանը տեղեկացրել է եկեղեցու հոգեւորականներից մէկը, նշելով, որ աստն ու մահիկը գծուել են կարմիր ներկով: Ոստիկանութիւնը այդ արարքը վանդալիզմ եւ ցեղային ատելութիւն բնութագրելով քրէական գործ է յարուցել եւ հետաքննութիւններ է կատարում յանցագործներին գտնելու համար:

Այս լուրերը տրամադրուծ են
ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի
Կեդրոնական Կոմիտէի
Հանրային Կապի Գրասենեակի կողմից
ARF Central Committee
Office of Public Relations
Contact Person: Saro Nazarian
PublicRelations.ARF@hotmail.com
Tel: (818) 243-7059
Fax: (818) 243-1467

Այս լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:
Լուրերը կարելի է վերահրատարակել: